

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԴՅՈՒՂԱԾԵՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

No 5

Գ. ԽԱՆԱԹՅԱՆ

ԹԹԵՆՈՒ ՏԵՐԵՎԸ
ՈՐՊԵՍ ՃԵՐԱՄԻ ԿԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒ ԳԱ ՀՐԱՄԱԿՁՈՒԹՅՈՒՆ

Երևան 1947

638.939

10275

17 | Книга для чтения, 4.

«История природы

8н.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԵՂԱՂԱՏՆԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

No 5

638, 939

Խ - 17

Գ. ԽԱՄԱՑՅԱՆ

ԽԱՄԱՑՅԱՆ Հ. 1961

ԹԹԵՆՈՒ ՏԵՐԵՎԸ
ՈՐՊԵՍ ՃԵՐԱՄԻ ԿԵՐ

10287

10287
A



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՄԱԿՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1947

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Նախագահության կտրգադրությամբ:

Հայկական ՍՍՌ ԳԱ Պրեզիդենտ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Պրակի խմբագիր՝ Ա. Գ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

Г. ХАЛАТЯН

Лист шелковицы как
корм шелковичного червя

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР. Ереван, 1947 г.

Ն Ե Բ Ա Ծ Ո Ւ Ի Թ Յ Ց Ո Ւ Ի Ն

Թթենին շատ օգտակար ծառ է: Նրա պտուղներն օգտագործում են իբրև սնունդ՝ թարժ և չոր զրությամբ: Պտղահյութից պատրաստում են զոշաք և քաղցր պաստել, ինչպես նաև օղի: Բնափայտն օգտագործում են տակառների, հրացանի փայտային մասերի համար, ինչպես նաև նավաշինարարության գործում: Թթենու փայտից պատրաստում են նաև բարձր որակի թուղթ, իսկ երիտասարդ ճյուղերի կեղեցից ստանում են թել: Բացի զըանից թթենու մի շարք սորտեր օգտագործվում են որպես գեկորատիվ բույսեր կանաչագարգման համար: Սակայն թթենու ամենամեծ արժեքն այն է, որ նրա տերելցարամի որդի միակ կերն է, հետեւարար՝ բնական մետաքսաթելի միակ աղբյուրը:

Մետաքսաթելը մեծ կիրառություն ունի կյանքում: Այն օգտագործվում է ոչ միայն հագուստեղենի, այլև բաղմաթիվ այլ նպատակների համար՝ բժշկության մեջ—վերաբուժության գծով, ուսկցուկան գործում—պարայուտներ պատրաստելու համար, ալրազացներում—մաղերի համար և այլն:

Սույն գրքույկի մեջ մենք նկարագրում ենք թթենու տերել իբրև շերամի որդի կեր, որը մեր կոլխոզային տնտեսության մեջ լայն կերպով օգտագործվում է շերամագանության համար:

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
999
1000

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ ԱՃՈՂ ԹԹԵՆՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ
ՏԵՂԱԿԱՆ ԴԼԵԱՎՈՐ ՍՈՐՏԵՐԸ

Եերամապահության համար օղտագործվում են գլխավորապես սպիտակ թթենու տերեները. սակայն Հայկական ՍՍՌ-ում բացի սպիտակ թթենու սորտերից և զանազան ձևերից կա նաև առ թթենի, որն անվանում են նաև խառնթութ:

Սպիտակ թթենուն պատկեռնող սորտերի պտուղները լինում են սպիտակ, կարմիր, մոռագոյն և այլ Քանի որ սև թթենու պըտուղները ևս սև և հաճախ վերջինները շփոթում են սպիտակ թթենու սևապառեղ սորտերի հետ, ուստի անհրաժեշտ ենք գըտնում նկարագրել դրանց՝ նշելով նրանց տարրերությունները:

Սպիտակ թթենու հայրենիքը համարվում է Արևելյան Ասիան՝ Զինաստանը, ձապոնիան և Հնդկաստանը: Թթենու այդ տեսակն ունի բաղմաթիվ սորտեր ու փոփոխակներ: Աղատ պայմաններում աճած ծառերի բունը ունենում է 15—18 մ բարձրություն՝ ծածկված գորշ կամ մոխրավան-գորշ գույնի ճաքճքված կեղեռվ, ճյուղերը փոված են և բաղմաթիվ: Տերեները ձվածեն և սրտաձե, նաև կլորավուն՝ տարբեր մեծության: Տերեաթիթեղը բարակ և հարթ է, ցածի կողմից մերկ, թափով ծածկված միայն ջղիրի անկյուններում: Դադաթը բութ կամ քիչ դեպքում սուր, եղբերը առանձնավոր կամ սղոցաձե: Թիթեղն ամբողջական է կամ բլթակավոր, բլթակները լինում են երկու և ավելի՝ մինչև քսան: Տերեակնթունը հաճախ ծածկված է թափով և վերին կրղմից ունի ակսոիդ: Վարսանդը սոնակ չունի՝ սպին նստաղիր է, ներսի կողմից պտուկավոր: Ծաղկաբույլը օվալ, Պտուղները զանազան մեծության ու համի: Նրանք կեղծ են, կազմված առանձին մանր կորիղակներից: Պտղակոթը բավականին երկար է, որի պատճառով պտուղները կախված են:

Սպիտակ թթենիները, բայցի մի քանի սորտերից, զիմանում
են մինչև — 30° ցրտերին:

Եվրոպա են ներմուծվել 15-րդ դարի վերջերին:

Առ թթենու հայրենիքը համարվում էն Պարսկաստանն ու
Անդրկովկասը: Աղատ պայմաններում աճած ծառերի բունը ավելի
ցածր է, այն ունենում է 8—12 մ բարձրություն՝ ծածկված մուգ-
դորշ գույնի հասաւ կեղեռով: Ծառը նույնական ճյուղավորված է,
բայց սրա ճյուղերը կարճ են, ուղիղ չեն գնում, այլ ճնկաձև թեք-
վում են, և երիտասարդ ճյուղերը պատված են թափով: Տերեները
սրտածե են, թաթածեն, կլորավուն: Տերեաթիթեղը կոշտ է, վերին
երեսը մուգ, իսկ ստորինը՝ բաց կանաչ, ուժեղ արտահայտված
ջղերով՝ ծածկված թափով, եղբերը խոշոր ու անկանոն ատամնե-
րով են, մեծ մասամբ ամրողական, թեպետ և պատահում են
բլթակներով: Տերեակոթունը կարճ է, նույնական ծածկված թափով,
բայց վերին երեսին ակոս չունի, որով շատ բավ տարբերվում է
սպիտակ թթենու տերեակոթունից: Արական՝ ծաղկաբույլը հասաւ
է և գլանածե, իգականը՝ կարճ և ձվաձև: Վերջինս համեմատարար-
ավելի երկար է իր ծաղկակոթից: Վարսանդը համարյա սոնակ
չունի: Սպիթի եղբերը ծածկված են թափով: Պատուղները խոշոր են,
մկղբում կարմրավուն, հասունացած ժամանակ՝ սե քաղցրավուն
կամ թթվաշ, համեղ ու շատ հյութալի: Այս տեսակի պտուղները
ճյուղերից կախված չեն, ինչպես սպիտակ թթենունը, այլ նստած
են շատ կարճ կոթունի վրա՝ համարյա անմիջապես կուած ճյուղին:

Սև թթենու անցողությունն ընթանում է ավելի գանդազ:
Քան սպիտակ թթենունը, նրա երեք տարեկան ծառն ավելի փո-
քը տեսք ունի, քան սպիտակ թթենու մեկ տարիկանը: Սպի-
տակ թթենու հետ համեմատած՝ սև թթենին գարնանը մոտ 15—18
օրով ուշ է բողբոջում և այդպիսով աղատվում է վաղ դար-
նան ցրտահարությունից՝ այդ իսկ պատճառով հույները նրան
անվանում են «խոհուն ծառ»: Սև թթենին ուժեղ քամիներին ու
ցրտերին դիմացկուն չէ: Նա մշակվում է հարավային երկրներում՝
բացառապես իրեն պատառ ծառ:

Եվրոպացիներին սև թթենին ծանոթ է անհիշելի ժամա-
նակներից: Մինչև 15-րդ դարի վերջերը՝ այսինքն մինչև սպի-
տակ թթենու տարածվելը Եվրոպայում շերամի որդերը կերա-
կը ում էին սև թթենու տերեներով:

Մեղ մոտ Հայկական ՍՍՌ-ում տարածված են սպիտակ թթենու «վայրի» (ջլու կամ ժլու), անկորիկ և կորիզավոր սորտերը, որոնք իշարից տարբերվում են հետեւյալ հատկանիշներով:

«Վայրի» թթենու բունը ցածր է, ճյուղերը կողային ոստերով հարուսա, փշոտ: Տերեները մանր են, մասամբ բազմաթիվ բլթակներով, բաց-կանաչ, նուրբ, շուտ թառամող, բայց սննդաբար: Տերեկի՝ մասսան քիչ է, հետեւարար ծառը ցածր բերքատու է, պիտանի է շերամի կերակրման համար: «Վայրի» թթենին զիմացկուն է հողի և կլիմայի անբարենպաստ պայմաններին, ինչպես նաև պարագիտային հիվանդություններին և ցրտերին: Այս սորտի պառւղները մանր են, սպիտակ, սև, կարմրավուն, անհամ, թթու, ուտանլու կամ այլ արտադրանքի համար անպիտք: Բազմանում է սերմով:

Անկորիկ թթենու աղատ աճնցրած ծառերը բավականին բարձր են, գագաթը՝ խոշոր, փռված ճյուղերով: Ճյուղերը ողորկ են, առանց կողային ոստերի: Տերեները մեծ են, մեծ մասամբ ամբողջական, սննդաբար, մոտ ու փափուկ: պիտանի է շերամի որդի կերակրման համար: Պառւղներն անկորիկ են, բավականին խոշոր, սպիտակ, քաղցրահամ և հյութալի: Ծառը պակաս ցրտադիմացկուն է: Բազմացնում են պատվաստով:

Կորիզավոր թթենին անկորիկ թթենուց տարբերվում է նրանով, որ պառւղն ունի կորիկ, տերեներն ավելի փայլուն են և մասամբ կոշտ: Եերամի որդի կերակրման համար չեն օգտագործում: Բազմացնում են նույնպես պատվաստով:

Թթեննի Տերեկի ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Առհասարակ լուսական աշխարհում կանաչ տերեները հանդիսանում են բույսին սնունդ մատակարարող օրդան: Դրանք օդից վերցնելով ածխաթթու գաղ, արմատներից ստացած ջրի հետ, արևի էներգիայի օգնությամբ կազմում են օրգանական նյութեր: Այս՝ պրոցեսը կոչվում է ֆոտոսինթեզ: Ֆոտոսինթեզը համարվում է օրգանական աշխարհի հիմնական պրոցեսներից մեկը, նա էական նշանակություն ունի ոչ միայն իրենց՝ բույսերի, այլև կենդանիների ու մարդկանց համար, որովհետեւ վերջիվերջո օրգանական սննդի միակ աղբյուրը հանդիսանում է ֆոտոսինթեզը:

Թթենու տերեները նույնպես իրենց՝ թթենիների համար հանդիսանում են սնունդ մատակարարող օրգան։ Թթենու տերեները պարունակում են ջուր, մոխրանյութեր, օրգանական նյութեր, որոնք զանազան պայմանների ազդեցության տակ անընդհատ փոփոխությունների են ենթարկվում ոչ միայն վեգետացիայի ընթացքում, այլև որդի կերակրման կարճ ժամանակամիջոցում, նույնիսկ՝ օրվա ընթացքում։

Թթենու ՏԵՐԵՎՀԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Թթենու տերենի մոխրանյութերի մեջ հայտնաբերված են ձեմբաթթվի, կալիումի, մագնիզիումի, կալցիումի, սիլիցիումի աղեր, այնուհետև երկաթ, ողինձ ու ցինկ, ինչպես նաև ալյումին։

Անեցողության ընթացքում՝ տերենի զարգացման ու հասունացման հետ միասին մոխրանյութերն ավելանում են, հետեւ քար աշնանային տերեններն ավելի հարուստ են մոխրանյութերով, քան ամառային տերենները, իսկ վերջիններն ավելի հարուստ են, քան գարնանային տերենները։ Այսուհետև մի ճյուղի վրա գտնվող ներքենի, համեմատաբար ծերացած տերեններն ավելի շատ մոխրանյութեր են պարունակում, քան վերինները՝ տփելի երիտասարդները։ Տարբեր սորտերի տերենների մեջ մոխրանյութերի քանակը տարբեր է։ Սովորական Միության տեղական թթենու տերենների մեջ դրանք ավելի շատ են, քան Տաշքենդում և Ճապոնիայում աճող ճատոնական սորտերի տերեններում։

Մոխրանյութի տոկոսը կախված է տերենի մեջ գտնվող ջրի պարունակությունից։ Որքան տերենի մեջ ջուր շատ կա, այնքան նրա մեջ մոխրանյութերի տոկոսը փոքր է։ Այստեղից հետեւմ է ջրապակաս հողերում կամ հողամասը նորմայից պակաս ջրելու դեպքում թթենու տերենի մեջ փոքրանում է ջրի պարունակությունը ու բարձրանում է մոխրանյութի տոկոսը, որի հետևանքով տերենները կոշտանում են։

Թուֆորական միացությունները թթենու տերենների մեջ անեցողության ընթացքում՝ զարնանից դեպի աշուն անընդհատ պակասում են։ Երիտասարդ տերենների մեջ դրանք ավելի շատ

ին, քան ծերացածների մեջ: Քանի որ ճյուղի ծայրի տերեներն ավելի հրատասարդ են, քան թե հիմքի մասինը, ուստի և դրանց մեջ փոսֆորական միացություններն ավելի շատ են: Միաժամ և երկայն ճյուղերի տերեների փոսֆորական միացություններն ավելի շատ են, քան քառամյա և հնգամյա ճյուղերի վրա աճածներինը: Թփաձե թթենիների տերեների մեջ զրանք ավելի շատ են, քան միջակրուն թթենու տերեների մեջ: Սովորական Միության տեղական թթենու տերեները փոսֆորով ավելի հարուստ են, քան թե Տաշքենդում ու Ճապոնիայում աճող ճապոնական սորտերի տերեները:

Թթենու տերեների մեջ գտնվող ածխաջրելլը նույնպես աճածնեատ փոփոխվում են զանազան պայմանների աղբեցության տակ: Աւսումնասիրությունները ցույց են տվել, որ որոշ կապ կա տերերի մեջ գտնվող ջրի պարունակության և ածխաջրերի միջև: Արքան ջրի պարունակությունը մեծ է, այնքան քիչ են ածխաջրերը: Օրվա ընթացքում ածխաջրերն ամենից քիչ են լինում մինչև արեի գույս գալը: այսուհետև նրանց քանակն աստիճանաբար ավելանում է և ամենից շատ լինում է մոտավորապես ժամը 2-ին: Դրանից հետո ածխաջրերը նորից աստիճանաբար պակասում են, որպիսի նրանք անցնում են ճյուղերի ու արմատների մեջ: Աշնանը ածխաջրերի օրվա քանակի տարբերությունը տերերի մեջ կազմում է 0,3 մինչև 0,5 %, իսկ զարնանը՝ 1 մինչև 1,40 %: Օրվա ընթացքում, ինչպես և զարնանը ու աշնանը, տերեների մեջ ածխաջրերի կուտակման տարբերությունը բացատրվում է փոտոսինթեզի ուժով: Տերերի հասունացման հետ մեկտեղ մեծանում է ածխաջրերի ընդհանուր պարունակությունը և զուգահեռաբար պակասում սպիտակուցային նյութերի քանակը: Սովերում աճած թթենու տերեների մեջ ածխաջրերն ավելի քիչ են, քան նորմալ լույսի տակ: Սովորական Միության տեղական թթենու տերեներն ավելի հարուստ են ածխաջրերով, քան Տաշքենդում ու Ճապոնիայում աճող ճապոնական սորտերի տերեները:

Թթենու տերերի մեջ գտնվող սպիտակուցային նյութերն աճեցության ընթացքում անընդհատ պակասում են: Ուրեմն որքան տերեները ծերանում են, այնքան նրանց մեջ սպիտակուցային նյութերը պակասում են: Սպիտակուցներն ամենից

շատ զտնվում են ամենաերիտասարդ տերեների մեջ: Սովերում աճած տերեներում սպիտակուցային նյութերն ավելի քիչ են, քան լույսի տակ աճած տերեներում: Թփաձև թթենու տերեների մեջ սպիտակուցները շատ են: Սովետական Միության տեղական թթենու տերեներն ավելի հարուստ են սպիտակուցներով, քան թե Տաշքենդում ու Շավառնիայում աճող ճապոնական սորտերի տերեները: Տերերի ծերացման հետ մեկտեղ փոխվում է սպիտակուցների ոչ միայն քանակը, այլև որակը՝ անսակները:

Թթենու տերեների մեջ կան նաև ճարպային նյութերը Տերեների աճման և զարգացման հետ մեկտեղ ճարպերի քանակը մեծանում է: Բարձրաբուժն և միջակըուն թթենու տերեների մեջ ճարպերի քանակն ավելի շատ է, քան թփաձև թթեների տերեներում:

Երրամի որդերի զարգացման համար խոշոր նշանակություն ունի ջրի պարունակությունը տերեների մեջ, որովհետեւ շերամն իր անհրաժեշտ ամբողջ ջուրը ստանում է միայն տերեներից: Վերջինների հասունացման ու ծերացման հետ մեկտեղ ջրի պարունակությունը պակասում է: Նա աստիճանաբար պակասում է նաև որդերի կերակրման կարճ ժամանամիջոցում: Միենույն ճյուղի վրա գտնվող ծայրի երիտասարդ տերեներն ավելի հարուստ են ջրով: Քան ստորին տերեները: Սովետական Միության տեղական թթենու տերեները ջրով ավելի աղքատ են, քան թե Տաշքենդում և Շավառնիայում աճող ճապոնական սորտերի տերեները:

Ածխաջրերի ու սպիտակուցային նյութերի բարենպաստ հարաբերության պայմաններում թթենու տերեները կարող են անպետք լինել՝ ջրի համեմատաբար ավելի կտմ պակաս լինելու պատճառով:

Տերերի մեջ ջրի պակասությունից որդերը հիվանդանում են փորկապով, իսկ ջրի ավելցուկի զեպքում բոժոժները լինում են փոքր, և թիթենուները գրենա (ձվիկներ) քիչ են արտադրում:

Ջրի քանակի հետ սերտորեն կապված են նաև տերերի մեջ գտնվող մյուս բաղադրիչ նյութերի փոխհարթերությունները, ինչպես նաև տերեահյութի թթվության աստիճանը: Թթենու տերեների մեջ հայտնաբերված են թրթնջկաթթու, զինեթու, խնձորաթթու և կիտրոնաթթու: Հիշյալ թթուները զանազան

առբանի տերեների մեջ զանվուծ են տարբեր քանակությամբ, ըստ որում ամենից շատ լինում է թրթնչկաթթուն: Օրգանական թթուները երխասարդ տերեների մեջ ավելի շատ են, քան թե հասունացած տերեների մեջ և որդի ղարգացման հետ մեկտեղ առախճանաբար պակասում են:

Թթենու տերեների մեջ կան նաև A, B և C վիտամիններ, ըստ որում այդ վիտամինների տեսակետից թթենու տերելը չեղիջում այնպիսի սույսերին, ինչպիսին են կաղամբը, սպանախը և երեքնուկը: Թթենու զանազան սորտերի տերեների մեջ այդ վիտամինները տարբեր քանակով են լինում, ըստ որում կերակրման համար դորձաղրվող սորտերի տերեների մեջ ավելի շատ վիտամին կա, քան դեկորատիվ սորտերի տերեների մեջ:

Թթենու Տերեկի Ֆիզիկական ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Տերեկի ֆիզիկական կազմություն ասելով հասկանում ենք: տերեկի մեկ միավոր մակերեսի կշիռը, հաստությունը, ամրությունը, կոշտության գործակիցը, թառամելու աստիճանը և այլն:

Անեցողության ընթացքում՝ տերեկի հասունացման հետ մեկտեղ նրա մեկ միավոր մակերեսի կշիռը ավելանում է, իսկ ջրի տոկոսը պակասում, ուրեմն այդ երկու մեծությունները գտնվում են հակաղարձ հարաբերության մեջ: Մեկ միավոր մակերեսի կշիռը կախված է նաև նրանից՝ թե շիվը հին ճյուղի որ մասումն է գտնվում: Ուշան շիվը ճյուղի վրա ծայրին մտա չ գտնվում, այնքան մեծ է տերեկի մեկ միավոր մակերեսի կշիռը Մեկ միավոր մակերեսի կշիռների տարբերություն նկատվում է նաև մեկ տերեկի սահմաններում: տերեկի գագաթի մասում այն ավելի բարձր է, քան հիմքի մասում: Ճյուղի վրա՝ գագաթից զեղի հիմքը տերեների մակերեսի կշիռը գնալով ավելանում է, որովհետեւ ճյուղի վերին մասում գտնվող տերեներն ավելի երիտասարդ են, քան հիմքինը:

Թթենիների զանազան սորտերի տերեների հաստությունը տարբեր է: Նույնիսկ մեկ տերեկի սահմաններում ծայրի մասն ավելի հաստ է, քան միջին մասը, վերջինն ավելի հաստ է, քան հիմքի մասը: Դրան զուգընթաց մեծանում է նաև տերեկի մակերեսի կշիռը:

Տերեկի թիթեղի ամրությունը որոշվում է ճնշման միջոցով՝

սնղիկի սյան բարձրությամբ միլիմետրերով: Ամբությունը կախաված է տերեկի մեջ գտնվող ջրի պարունակությունից: Որքան ջուրը քիչ է, այնքան ամուր է տերեկը: Աճեցողության ընթացքում տերեկի հասունացման հետ մեկանող, ամբանում է նաև նրա թիթեղը:

Կոշտության գործակիցը որոշվում է տերեկի մեջ գտնվող կրային նյութի ու ջրի քանակային հարաբերությունը: Տերեկի հասունացման հետ մեկտեղ բարձրանում է նրա թիթեղի կոշտության գործակիցը, որովհետեւ տերեկի հասունացման հետ պակասում է նրա մեջ եղած ջրի պարունակությունը: Զանազան սորտերի տերեների կոշտության գործակիցը տարբեր է, բայց բոլոր դերքերումն էլ տերեկի թիթեղի կոշտության գործակիցն ավելի բարձր է հիմքում, պտկաս՝ միջին մասում, ավելի պակաս՝ վերին մասում: Տերեկի կոշտության գործակիցն աշնանն ավելի մեծ է, քան գարնանը, որովհետեւ աշնան տերեների մեջ ջուրը պակաս է, իսկ կիրը՝ ավելի շատ:

Թեպետ ճյուղի վրա, սկսած ծայրի երիտասարդ տերեկից դեպի հիմքը ջուրն աստիճանաբար պակասում է, բայց ամենամեծ քանակով գտնվում է ոչ թե ծայրի առաջին տերեների մեջ, այլ երկրորդ, որովհետեւ առաջին տերեկը գեռ երիտասարդ է և լրիվ կազմակերպված չէ: Թառամեկու տեմպը ցածի տերեներում ավելի ուժեղ է, քան վերին՝ երիտասարդ տերեներում:

Թթենու տերեների քիմիոկան բաղադրությունն ու ֆիզիկական հատկությունները փոփոխման են ենթարկվում հողի և նրա տեսակների, տնկման խտության, պտակի ձեավորման (թթաստանների սիստեմները) պարարտանյութերի ու դրանց տեսակների, խնամքի և այլ պայմանների աղղեցության տակ: Ծանր կավային հողերում թթենու տերեկի մնակ միավոր մակերես սի կշիռն ու ամբությունը պակասում է, իսկ ջրի պարունակությունը մեծանում: Ավաղախառն հողերում տեղի է ունենում հակառակը: Կավային հողերում աճող թթենու տերեների մեջ սպիտակուցային նյութերի պարունակությունը մեծանում է, իսկ ածխաջրերինը՝ ընկնում: Ավաղային հողերում աճած թթենիների տերեների մեջ հակառակն է լինում:

Որքան թթենիները խիտ են տնկված, այնքան էլ նրանց

տերեների խոնավությունն ավելի շատ է, հետեւաբար պակաս է մեկ միավոր մակերեսի կշիռը:

Բարձրաբարուն թթենիների տերենիներն իրենց մեջ պարունակում են ավելի քիչ ջուր, քան թե միջակբուն թթենու տերենիները: Դրան հակառակ, բարձրաբարուն թթենիների տերենիների մեջ մեկ միավոր մակերեսի կշիռն ավելի բարձր է, քան թե միջակգուն թթենիների տերենիներինը, իսկ վերջիններինն ավելի բարձր է, քան թփածե թթենիներինը: Բարձրաբարունից գեպի միջակբուն և միջակբունից՝ թփածե թթենիները՝ տերենիների մեջ խոնավությունն ու սպիտակուցային նյութերը ավելանում են, իսկ ածխաջրերն ու թաղանթանյութը՝ պակասում:

Թթենու տերենի ներքին կազմությունն ևս մեծ նշանակություն ունի նրա որակի տեսակետից:

Այսպիսով կարելի է տաել, որ տերեւ աճեցողության ընթացքում, բազմաթիվ արտաքին ֆակտորների ազդեցության տակ ենթարկվում է հետեւալ վորփությունների.

ա) Քիմիական բաղադրության վերաբերմամբ:

1. Լուծվող ածխաջրերը կնալով ավելի ու ավելի կուտակվում են մինչև աշուն, բայց տերենի գեղնելու շրջանում զբանց քանակը պակասում է:

2. Սպիտակուցները պակասում են:

3. Ֆուֆորական միացությունները պակասում են:

4. Օրգանական թթուների քանակը պակասում է, թթվնջկաթթվի քանակն արագ թափով ընկնում է:

5. Բջջանյութի թթվության աստիճանը իջնում է:

6. Թաղանթանյութի քանակն ավելանում է:

7. Մոխրանյութի քանակն ավելանում է:

բ) Ֆիզիկական կազմության վերաբերմամբ

1. Տերեւ կոշտանում է:

2. Մեկ միավոր մակերեսի կշիռը մեծանում է:

3. Ամրությունը մեծանում է:

4. Զուրը պակասում է:

5. Կոշտության գործակիցը բարձրանում է:

Թթենու տերեի դարզացման այս բարդ պայմաններում է
ընթանում շերամի որդի կերակրութը:

ԹԹԵՆՈՒ ՏԵՐԵՎԼԻ ԿԵՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Մենք գերեւում ասացինք, որ շերամի որդի միակ կերը
թթենու տերեն է: Հարց է ծագում, արդյաք թթենու բոլոր տես-
սակների ու սորտերի տերեներն էլ միատեսակ կերային արժեքը
ունեն:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ թթենու տար-
բեր տեսակներն ու սորտերը միենույն կերային արժեքը չունեն-
նույնիսկ յիշենույն սորտը տարբեր կերային արժեք է ստանում:
Նայած թե ինչ հողակլիմայական պայմաններում է առում ու
դարձանում և ինչպիսի խնամք է ստանում:

Պատմությունից հայտնի է, որ մինչև սպիտակ թթենու
սորտերի եվրոպա ներմուծվելը (15-րդ դար) շերամը կերակրում
էին սև թթենու տերեներով: Այս գնապքում շերամի բոժոժները
թեպետ խնջոր են, բայց մետաքսաթելի որակը լինում է ցածր:

Ֆիլիպինյան թթենին, որ մի ժամանակ մեծ հույսեր էր
ներշնչել արևմտաերոպական շերամապահներին, այժմ դատա-
պարտված է կորսոյան, որովհետեւ նրա տերեներով կերակրած
որդերի բոժոժները լինում են անորակ:

Սովետական Միության, Ճապոնիայի, Եվրոպայի շերամա-
պահական բազմաթիվ դիտահետազոտական հիմնարկներում
տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում զրվել են փոր-
ձեր թե տարբեր սորտերի և թե զանազան պայմաններում աճց-
րած թթենիների տերեների կերային արժեքը որոշելու ուղղու-
թյամբ:

Այսպիս օրինակ, որդերը կերակրելով անձրեից խոնավացած-
ու սովորական տերեներով՝ եկել են այն եղբակացության, որ
խոնավ տերեներով կերակրելը ոչ միայն վնասակար չէ, այլ օգ-
տակար է, քանի որ որդերը և բոժոժները ծանր են ստացվում
թեպետ բոժոժի մեջ մետաքսաթելը համեմատաբար պակաս է
լինում:

Պարզելու համար, թե ինչպիսի է ազգում տերեի աստիճա-
նական հասունացումը որդերի դարձացման վրա՝ ապրիլի 15-ից

մինչև օգոստոսի 16-ը կատարել են 7 հերթական կերակրումներ, ըստ որում բոլոր փորձերումն էլ գործադրել են միենույն քանակի տեղի: Այդ փորձերից եկել են այն եղանակացության, որ դեպի աշուն տերեկի սննդարարությունն ավելի ու ավելի թուլանում է, որի պատճառով որդերը փոքրանում են, հետեւարար թեթևանում, զբա հետեանքով փոքրանում է, նաև բոժոժը և իջնում է նրա կշիռը:

Ի՞նչպէս հայտնի է, թթենին երկտուն ծառ է, նա լինում է արական և իդական (պառզ ավող): Փորձերը ցույց են տվեք որ թթենու սեռը տղղում է որդերի կերակրումների արդյունքունքի վրա Արական թթենու տերեններով կերակրած որդերի բոժոժների միջին կշիռը բարձր է եղել 6,6% ու ով:

Արգերի մահացության աստիճանը և բոժոժաթաղանթի կշիռը սերտոցին կապված են տերեկի զարգացման աստիճանի (հասակի): Տեսակի ձյուղի ծայրի 5—7 տերեններով կերակրելու դեպքում որդերը մահացել են ամենաբարձր տոկոսով, իսկ բոժոժաթաղանթը ունիցել է համեմտարար ցածր կշիռ: Մահացության տոկոսն ամենաքիչն է եղել որդերը 13—15-րդ տերեններով կերակրելու դեպքում, իսկ 15-րդից ցածր տերեններով կերակրելիս մահացության տոկոսն աստիճանաբար բարձրացել է և բոժոժի թթղանթի կշիռը ընկել:

Կոպտացած, ծերացած տերեններով կերակրելիս՝ որդերը զարգացել են զանգաղ, որի հետեանքով զանգաղ են զարգացել նաև մհատաքսակղզերը: Դա բացատրվում է նրանով, որ ծերացած տերենների մեջ սպիտակուցային նյութերը քիչ են և մյուս նյութերն ել փոփոխված են: Երիտասարդ աերեններում զգալիոր են ավելի են լուծվող ածխաջրերը: Բացի զրանից, երիտասարդ տերենների մեջ կալիումի ու մագնիսիումի փոքր քանակության պատճառով աղոտը մեծ մասամբ լրիվ ձեռվորված միացություններ չի ունենում, որի հետեանքով իջնում է աերեկի կերային արժեքը:

Ստվերում աճող թթենու տերեններով կերակրելիս խիստ ընկել է որդերի կենսունակությունը, բոժոժների կշիռն ու նրա թաղանթի ելքի տոկոսը:

Արեկի լույսի պակասության դեպքում թթենու տերեկի մեջ շատանում է ջուրը, իսկ զբա հետեանքով նաև միջընիջային

տարածությունը: Արդյունքն այն է լինում, որ տերեկի սպիտակուցոյն հյութերը և լուծվող ածխաջրերը պակասում են, և նրա որակն իջնում է:

Թթվածու սորտը մեծ ազգեցություն է թողնում կերակրման արդյունքների վրա: Տարբեր սորտերի տերեներով կերակրած որդերից սուսած բոժոժներն ու նրանց թաղանթերի հշիոները, ինչպես նաև մնացած առաջանթիւնները լինում է տարբեր: Զանազան սորտերի տերեները շատ խիստ ազգեցություն են թողնում նաև թիթեռների բեղմնավորված ձվերի քանակի ու կշռի վրա:

Եերամի որդերը կերակրելով մեր տեղական ռվայրի» ու անկորիզ թթվենիների և ներմուծված ոռոգուված, խտախինեց ու ֆուսումարու ճապոնական սորտերի տերեներով՝ մեր փորձնական կերակրումները ցույց են տվել որ այդ զանազան սորտերն ունեն տարբեր կերային տրմեք, չնայած որ հիշյալ թթվենիները փորձնական կերակրումների ամբողջ ժամանակամիջոցում զարգացել են միևնույն հողակլիմայական պայմաններում (Երևան) և ստացել միատեսակ խնամք: Ամենալավ հատկանիշներ ցուցաբերել է մեր տեղական անկորիզ թթվենին: Այդ թթվենու տերեներով կերակրած շերամի որդերը տվել են ամենածանր բոժոժը (2,79 գրամ), որի մետաքսաթաղանթը նույնպես եղել է ամենից ծանրը (0,445 գրամ), մեկ տուփից տվել են ամենից շատ բերքը (96,2 կիլոգրամ բոժոժ) և մեկ բոժոժից ամենաերկար թելը (963,3 մետր): Նրան հաջորդում է ոռոգուված երրորդ տեղը գրավում է «վայրի» թթվենին, իսկ այնուհետև գալիս են խտախինեց և ֆուսումարուն, ըստ որում ֆուսումարուն բռնում է ամենավերջին տեղը:

Սորտի ազգեցությունը մեծ է նաև թիթեռի ձվադրության վրա: Մեկ տուփ (25 գրամ), գրենա ստանալու համար անկորիզ սորտով կերակրած վարիանտից անհրաժեշտ է 41 հատ ածվածք, մինչդեռ ֆուսումարու սորտի վարիանտից՝ 52 հատ:

Հարց է ծագում, թե ինչով պետք է բացատրել թթվենու տարբեր սորտերի տերեների ոչ միատեսակ կերային արժեքը:


Հայտնի է թե ինչ է ներկայացնում թթվենու տերերը: Մենք տեսանք, որ նրա մեջ կան բաղմաթիվ հանքային նյութեր, ածխաջրեր, սղիտակուցային բարդ միացություններ, օրգանա-

կան թվուներ և այլ նյութեր, որոնք անընդհատ փոփոխությունների են և նթարկվում միջավայրի դանաղան պայմանների նկրգործության տակ:

Եերամի որդերը բացի թթենու տերեկից ուրիշ որևէ լրացուցիչ կեր չեն ստանում: Նրանք օգտագործում են միայն այն նյութերն ու ջուրը, որ կա տվյալ տերեկի մեջ: Իսկ զրանք պետք է լինեն այնպիսի հարաբերությամբ և այն քանակով, ինչպիսին պահանջվում է շերամի որդի լրիվ զարգացման և բարձրարտագրանք տալու համար: Սակայն թթենին իր տերեները շերամի որդերի համար չի աճեցնում, այլ իր սեփական սննդառության համար, ուստի որդը համակերպվում է այն կերի հետ, ինչ որ կա տվյալ տերեկի մեջ, ըստ որի էլ կառուցում է իր օրգանիզմին ու տալիս համապատասխան արտադրանք:

Տարբեր սորտերի տերեների ոչ միատեսակ կերային արժեքը բազմաթիվ ուսումնասիրողներ աշխատել են բացառորեկրիմիական բաղադրությամբ, մասնավորապես տերեկի մեջ գտնվող ազոտով: Մի ժամանակ շերամապահների մեջ տարածված էր այն տեսությունը, որ իբր թե որդերի բոլոր անբացատրելի պատճենների պատճառը հանդիսանում է ազոտի անբավարար պարունակությունը թթենու տերեների մեջ:

Այդ ժամանակաշրջանում ազոտի վերաբերյալ անալիզներ են կատարվել շատ երկներում: Զանազան գիտնականներ տարբեր ժամանակներում որոշել են ազոտի քանակը չոր տերեկի մեջ, ազոտի համեմատական պարունակությունը՝ չոր ու թարմ տերեների մեջ, ազոտի ու ջրի համեմատական պարունակությունը ըստ որդերի հասակի, այնուհետև տերենեսի ազոտի, ջրի ու մոխրի համեմատական պարունակությունը տարբեր ամիսներին (մայիս, հունիս, հուլիս, օգոստոս), թթենիների տերեների ազոտի պարունակության փոփոխությունները օրվա ընթացքում, ինպիս նաև տերեները ճյուղերով լույսի ու մթության մեջ պահելու ժամանակ: Սակայն այս և նման քիմիական անալիզները ոչ միայն չեն հաստատում այդ տեսությունը, այլև հաճախ հակասում են զրան: Կերի մեջ պարունակությունը ազոտի քանակը ոչ բոլոր գեպերում էր համապատասխանում բոժոժի բերքատվությանը: Պարզվեց, որ ազոտը հանդիսանում է որոշ ֆակտորներից մեկը, բայց ոչ միակը: Քիմիական անալիզն այդ



հարցում բավարար տվյալներ չի տալիս, որովհետեւ, ինչպես
ասել ենք, տերեւի քիմիական բաղադրությունը զգալի չափով
փոփոխության է. և նշանակած նաև կերակրման կարճ շրջանի
ընթացքում:

Այսուհետեւ ուսումնասիրելով թթենու տերեների օրգանա-
կան թթուները և զբանց մեջ հայտնաբերելով նաև թթնջկաթթու-
շատերն այն կարծիքն են. հայտներ որ որդերը երիտասարդ
տերեներով կերակրելու ժամանակ առաջացած վնասը պետք է
վերագրել առհասարակ տերեւի մեջ օրգանական թթուների պա-
րունակությանը և մասնավորապես թթնջկաթթվի ավելցու-
կին: Սակայն այդ տեսությունն էլ չի լուծում հարցը: Խնդիրն
ավելի խորն ուսումնասիրելով՝ տարբեր գիտնականներ բացատ-
րել են տարբեր ձևով: Նրանցից մի մասը հայտնել է այն միտքը,
թե հասունացած տերեւ համարվում է այն տերեւը, որն իր մեջ
պարունակում է բավարար քանակությամբ ածխաջրեր: Ածխա-
ջրերը էներգիայի աղբյուր են, ուստի տերեւի մեջ զրանց պա-
կառության հետևանքով որդերը հիվանդանում են, ինում է
նրանց կենսունակությունը, և ստացվում է ըոժոժի ցածր րերք:
Այդ տեսակի առաջցուցելու համար զրկիլ են մի շարք փոր-
ձեր. օրինակ, որդերը կերակրել են սովորական տերեներով՝
հետեւ խառնած կարտոֆիլի ու բընձի օսլա: Դրված փորձերի
հետևանքով զգալիորեն բարձրացել է կերակրման արզյունքը,
որն արտահայտվել է ոչ միայն նրանով, որ կարճացել է կերա-
կրման տեսությունը, ավելացել է որդերի, հարմանյակների, բո-
ժոժիների կշիռը, ածած գրենայի քանակը, մետաքսաթելի ելքը:
այլև բարձրացել է որդերի զիմացկանությունը ֆլաշերիս հի-
վանդության դեմ:

Ամռան-աշնան շրջանում որդերին կերակրելով թթենու մի
շարք տարբեր սորտերի խառն տերեներով՝ նրանց հետ տվիլ են
նաև եղեգնաշաքար: Ստուգիչ պարտիայի որդերի մոտավորապես
90 տոկոսը հիվանդացել է ֆլաշերիայով, մինչդեռ տերեները
եղեգնաշաքարի հետ խառը կերած որդերը համարյա չեն հիվան-
դացել:

Հիվանդությունների գեմ որդերի զիմացկանություն ձեռք
բերելու հատկությունը բացատրվում է նրանով, որ կերի հետ
տված լրացուցիչ օսլան և շաքարը որդի սննդամարսողական

ֆերմհնտների աղղեցության տակ քայլայվում են մինչև պարզ նյութեր, որոնցից որդի օրգանիզմը կառուցում է իր համար անհրաժեշտ նյութեր և օգտագործում իրքի էներգիայի աղբյուր՝ Դրա հետևանքով բարձրանում է որդի կենսունակությունը։

Սրգեն ասել ենք, որ տարբեր հասակի տերեներն ունեն տարբեր քիմիական կազմություն։ Երիտասարդ տերեները հարուստ են սպիտակուցային նյութերով ու համեմատարար աղքատ՝ ածխաջրերով։ Նման տերեների որակը բարձրացնելու նպատակով ավելացրել են եղեղնաշաշաբարի ջրային լուծույթ, և կերակրել շերամի որդերին։ Ածխաջրեր խառնած երիտասարդ տերեներով կերակրած որդերը տվել են բարձր որակի բոժժաներ և բարձր բերք, մինչդեռ կոչտ՝ ծերացած տերեներով կերակրած որդերը ոչ մի զգալի արդյունք չեն տվել։

Սակայն գիտնականների մյուս մասը գտնում է, որ տերեին կերային արժեքի տեսակետից ոչ միայն ածխաջրերն են կարևոր, այլև սպիտակուցները, որ տերեի որակը որոշվում է ածխաջրերի ու սպիտակուցների փոխհարաբերությամբ։ Մի շարք փորձերով ցույց են տվել, որ երբ որդերը կերակրում են երիտասարդ տերեներով, որոնց մեջ գերակշռում են հեշտ մարսելի սպիտակուցային նյութերը, և պակասում են լուծվող ածխաջրերը, այդ գեղքում որդերի հյուսած բոժժաների մետաքսաթելի ելքը շատ ցածր է լինում։

Եթե ածխաջրերով աղքատ այդ տերեներին ավելացվի ջրում լուծված սախարոզա, ապա անըների մեջ եղած սպիտակուցների մինչև 90 տոկոսը կմնա որդերի մարմնում և հետո կանցնի մետաքսի մեջ։ Այդ երեսույթը բացատրվում է հետեւյալ կերպ։ սովորաբար տերեների մեջ ածխաջրերի ու սպիտակուցների փոխհարաբերությունների գեղքում ածխաջրերն օգտագործվում են իրքի էներգիայի աղբյուր, իսկ ածխաջրերի պակաս լինելու պատճառով, սպիտակուցները կատարում են նրանց գերը, որի հետեւանքով որդերի մարմնում, հետեւապիս և մետաքսի մեջ, սպիտակուցների քանակը պակասում է։

Այս և վերը հիշված զանազան նման փորձերից սկիզբ է առնում այսպես կոչված «ածխաջրեր» սպիտակուցների փոխհարաբերության տեսությունը։

Ուրիշ զիտնականներ թթենու տարբեր սորտերի տերեւների ոչ միատեսավկ կերային ալժեքը բացատրում են տերեւների արտաքին։ և ներքին կառուցվածքի տարբերություններով և Փիգիկական-քիմիական հատկություններով։ Այդ ապացուցելու համար որդերը կերակրել են թթենու երեք սորտերի տերեւներով և միաժամանակ ուսումնասիրել են այդ սորտերի տերեւների ներքին՝ անատոմիական կազմությունն ու քիմիական բաղադրությունը։ Պարզվել է, որ հիշյալ սորտերի տերեւները քիմիական բաղադրության տեսակետից միմյանցից համարյա չեն տարբերվել, բայց անատոմիական կառուցվածքի տեսակետից խիստ տարբերվել են։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ երեք սորտերի տերեւների տարբերությունն այն է եղեւ որ մեկի՝ սիմանուցի սորտի տերեւները մյուս սորտերից խիստ տարբերվել են միջընթային տարածությունների քչությամբ և տերեի միջին շերտի հաստությամբ։

Սիմանուցի և մյուս սորտերից մեկի սինույն ծավալի տերեւների կշիռները նույնպես իրարից խիստ տարբերվել են, զերջինի տերեւների կշիռը կազմվել է սիմանուցի սորտի տերեի կշռի ոչ ավելի քան 70 տոկոսը։

Որդերին կերակրելով հիշյալ սորտերի մինույն ծավալի տերեւներով (բայց կշռի տեսակետից տարբեր քանակությամբ), պարզվել է, որ յուրացման տոկոսը եղել է համարյա հավասար։ Որդերը ուտելով մինույն ծափակի, բայց տարբեր կշիռների տերեւ փաստորեն հավասար կեր չեն ստացել։ Սննդանյութերից աղքատ տերեւներով սնվող որդերի զարգացումը հետ է ընկեր որի պատճառով հասունացած որդերը, ինչպիս նաև ստացված բոժոժները, ունեցել են պակաս կշիռ։

Ինչպես տեսնում ենք, տերեի անատոմիական կազմությունը մեծ ազդեցություն է թողնում որդերի կերակրման արդյունքների վրա։ Կերային ամենալավ արժեք ունին սիմանուցի սորտի տերեւները, որոնց միջընթային տարածությունը մակերեսի համեմատությամբ կազմում է ամենափոքը տոկոսը։

Կերային արժեքի վրա ազդում է նաև տերեի զգավորումը։ Ուսումնասիրելով թթենու երեք այլ սորտերի տերեւները՝ գտել են, որ զգավորման բնույթով ու քիմիական բաղադրությամբ նըանք տարբերվում են միմյանց։ Սորտերից մեկի տերեւները

ունեցել են ավելի շատ ջղեր, հետեւաբար՝ բարձր տոկոսով ջուր։ շատ թաղանթանյութ և քիչ տոկոսով սպիտակուցային նյութերու ածխաջրեր՝ օսլա, շաքար։ Շերամի որդերն ամենից քիչ յուրացը ել են հենց այդ սորտի տերեները, որի հետեանքով բռնժների ու մետաքսաթաղանթի կշիռները եղել են ամենից ցածր։ Այս փորձերից կարելի է եղբակացնել, որ մեծ ամրություն ունեցող տերեներն ունեն կերային վատ որակ։ Դրա պատճառը հանգիստանում է բարակ ջղերի շատությունն ու մեծ խտությունը։

Ուրեմն թթենու տերեկի արտաքին ու ներքին կազմությունը և նրա ֆիզիկական որակը ազդում են շերամի որդի կերի ուստեղու արագության և յուրացման վրա, որն իր հերթին ազդում է որդի զարգացման վրա։

Այսպիսով տերեկի կերային արժեքը միակողմանի՝ այս կամ այն նյութի առավելություններով որոշելու փոխարեն առաջազրվում է նրա արժեքավորման կոմպլեքս մեթոդը՝ զրա մեջ մտցնելով նաև որդերի կերակրումը և ծախսված ու յուրացված կերի քանակը։

Ստկայն վերջերս որոշ գիտնականներ նորից վերականգնեցնում են «ազոտի տեսությունը»։

Լիոնի (Ֆրանսիա) մետաքսառությունասիրական կոնդիցիոն լաբորատորիան իր առաջ ինդիք է գնում որոշել որդերի կողմից զործագրած թթենու տերեների և մետաքսի աղոտի քանակների հարաբերությունը։ Այդ նպատակին հասնելու համար՝ քիմիական անալիզի միջոցով որոշում են որդերին տված տերեկի աղոտի տոկոսը, ամբողջ կերի հետ տված աղոտի քանակը, այնուհետեւ աղոտի այն քանակը, որը գտնվել է որդերի, նրանց կղկղանքների ու մետաքսի մեջ։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առաջին չորս հասակի որդերի կղկղանքների մեջ համարյա այնքան աղոտ կա (4,3%)⁰, որքան տերեկի մեջ (4,7%)⁰, այլ խոսքով ասած, տերեկի մեջ եղած համարյա ամբողջ աղոտը՝ որդերի առաջին չորս հասակում դուրս է դալիս կղկղանքի հետ։ Հինգերորդ հասակում որդերի մետաքսագեղձերը լցվում են մետաքսի մասսայով ի հաշիվ կերած տերեկի աղոտի, ուստի դա է պատճառը, որ այդ հասակի որդերի կղկղանքի մեջ աղոտը կազմում է տերեկի մեջ գտնվող աղոտի մոտավորապես կեսը (2,5%)⁰։

Այդ փորձերից նըանք եղրակացնում են, որ մետաքսը
հատուկ սեկրեցիայի արդյունք չէ, այլ արտաթորություն։
Մետաքսամասան մի արտադրանք է, որը կաղմված է ազու-
տային նյութերից, իսկ վերջինները որդերը ստանում են թթե-
նու տերևներից, հետևաբար որքան շատ աղոտ լինի թթենու
տերեկի մեջ, այնքան մետաքսատպությունը բարձր կլինի։ Այս-
տեղից հետեւթյուն—որդեսդի բռնութելը բարձրանա, պետք
է որդեսդին կերակրել այնպիսի տերևներով, որոնց մեջ աղոտը
շատ է, ուրեմն պետք է ընտրել թթենու այնպիսի սորտեր,
որոնք ավելի շատ են բավարարում այդ պահանջին, ինչպես
նաև՝ անհրաժեշտ է հողը պարարտացնել աղոտային պարարտա-
նյութերով։

Սովորական զիտոնական կրենկեն, ուսումնասիրելով մի
շարք բույսերի տերևների մի քանի հատկանիշները, այն է՝
քլթակների քանակն ու խորությունը, տերեկի թիթեղի երկարու-
թյան և լայնության հարաբերությունը, տերեկաթիթեղի հիմքի
անկյունը և այն՝ ցույց է տվել, որ տերեկի վրա նրա զարգաց-
ման ընթացքում նկատվում են որոշ հաստկային հատկանիշներ,
որոնց զարգացման տատիճանը կախված է յարուսի (հարկ) հա-
սունացման և զարգացման հետ՝ սկսած սերմից մինչև հասունա-
ցումը։ Տերեկի բոլոր հասակային հատկանիշների զարգացումը
արտահայտվում է ձեր օրինաչափ փոփոխություններով։ Այդ
հատկանիշների զարգացման աստիճանը կախված է յարուսի
հասունացման աստիճանից, իսկ ձեր ու յարուսի հարաբերակ-
ցության երեսությը պայմանավորվում է բույսի զարգացմամբ։

Կրենկեի տեսությամբ հասակային արտաքին հատկանիշ-
ների օգնությամբ հնարավոր է որոշել թթենու սորտերի առանձ-
նահատկությունները, նրանց ծերացման պրոցեսի արագությունը
անհատի զարգացման ընթացքում և տվյալ կոնկրետ արտաքին
պայմաններում։ Կրենկեի այս տեսությունը թթենիների նկատ-
մամբ գործնականում տվել է զբական արգյունք։

Եթե մի շարք ուսումնասիրուներ թթենու տերեկի կերային
արժեքը որոշում են քիսիական անալիգների, ֆիզիկական հատ-
կությունների որոշման և շերամի որդի անմիջական էկրակրման
մեջովներով, ապա կրենկեն այդ խնդիրն աշխատում է որոշել

ավելի հասարակ՝ տերեկի արտաքինությունների ուղղման մեջուգով:

Վերոհիշյալ ուսումնասիրությունների շնորհիվ մեր առաջ բացվում է թթենու տերեկի հներքին կյանքը: Զնայած, որ ուսումնասիրողներից շատերը տերեկի կերպային արժեքը որոշել են միակողմանիորեն, անուանենայնիվ ժամանակի ընթացքում թթենու տերեները զանազան գլուխություններով ուսումնասիրելու շնորհիվ այսօր մենք մատավորապես գաղափար ունենք նրա բազագրիչ մասերի վերաբերյալ որոնք մեզ հնարավորություն են տալիս իմանալու թե ինչ է կատարվում տերեկի մեջ, ինչպես են նրանք փոփոխվում զանազան պայմանների աղղեցության տակ, ինչպես է փոխվում նրանց որակը: Գիտենալով այդ մենք հնարավորություն կոչնենանք զանազան միջոցառումներով բարձրացնելու թթենու տերեկի որակը:

Այսպես օրինակ, քանի որ փորձերով ապացուցված է, որ ստվերում աճեցրած թթենիների տերեների մեջ շատանում է ջուրը և պակասում են սպիտակուցային նյութերն ու ածխաջրերը, որի հետեանքով նման տերեներով կերպարած որդերից ստացած արտադրանքը լինում է ցածր որակի, ապա մեզ համար պարզ է, որ թթենիները պետք է աճեցնել լուսավոր պայմաններում, որի համար նրանց պատկը պետք է ձեռվորել այնպես, որ ճյուղերը փոփած լինեն և լավ լուսավորվեն: Քանի որ մետաքսաթելը բաղկացած է սպիտակուցային նյութերից, իսկ աղոտը մեծ գեր է կատարում սպիտակուցների կառուցման գործում, ապա թթենիների հողամասը պետք է անպայման պարարտացնել ազոտական հանքային պարարտանյութով և գոմաղբով:

Քանի որ չոր հողամասում գտնվող թթենիների տերեկի մեջ շատանում է կրանյութը, որի հետեանքով բարձրանում է նրանց կոշտության գործակիցը և տերեն ամրանում է, որը բացասարար է ազգում որդերի արտադրանքի վրա, ապա նայած հողի տեսակին, թթենիները պետք է ջրել առատ կամ ընդհակառակը, տերեների մեջ ավելցուկ խոնավության շնորհիվ, բոժոժները լինում են փոքր, և թիթեռները զրենա քիչ են արտադրում, ուրեմն չպետք է հողը չափից ավելի ջրել և ճահճացնել:

Մինչև իսկ այնպիսի Փակտորը, ինչպիսին անձրժն է, ազգում է որդերի կերակրութիւնների վրա: Թեպետ այս դեպքում որդերը և բռժութիւնները լինում են ծանր, բայց մետաքսաթելլ համեմատաբար պակաս է ստացվում:

Մեր հիշատակած ուսումնասիրությունների հիման վրա, կարելի է կարենը գործնական եղբակացություններ անել բազմաթիվ հարցերի վերաբերյալ: Այդ եղբակացությունները օգուտ կրերեն մեր կողմովային տնտեսության մի կարեռը ճյուղին ֆթազորդությանն ու շերամապահությանը:

Այսուղից միաժամանակ կարելի է գալ մի եղբակացության, որ ճիշտ չէ այն կարծիքը, թե թթենին «աներես» ծառ է և նրան կարելի է չխնամել: Այս մեասակար տեսակներին մի անդամ ընդդիշտ պետք է վերջ տրվի և թթենինները պետք է ճանաչվեն որպես գյուղատնտեսական կարեռը կուլտուրա:

ՇԵՐԱԾԻ ՈՐԴԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Մեղ մնում է պարզիլ մի հարց, թե որքան տերեւ են պահանջում որդերն իրենց զարգացման ամբողջ ժամանակամիջույն, և նրա որ մասն են յուրացնում:

Գրենայից (Ճպից) գուրս գալու պահից մինչև բռժութակում որդերն անցնում են 5 հասակ: Այդ ժամանակամիջոցը տնում է մոտավորապես 30—35 օր: Չնայած այդ կարճ տևողությանը, որդերի աճը հսկայական է: Գրենայից գուրս գալու սումենտից մինչև բռժութ հյուսելու սկզբը—0,5 մգ կշռից նա դառնում է 5 զր, այսինքն մեծանում է 10,000 անգամ:

Իրենց զարգացման տարբեր հասակներում, որդերը տարբեր քանակով կեր են ուտում: Ամենաշատ կեր նրանք գործադրում են 5-րդ հասակում: Առաջին չորս հասակներում որդերը պահանջում են անհրաժեշտ ամբողջ կերի միայն 21.5% , իսկ միայն հինգերորդ հասակում՝ 78.5% : Պարզվում է նաև, որ առաջին երկու հասակներում որդերն իրենց մննդառության համար օգտագործում են ամբողջ տված կերի $1/4$ -ը, այնուհետև սկսում են ազանաբար ուտել, իսկ վերջում ուտում են ամբողջ կերի $3/4$ -ը:

Ամբողջ կերած տերեփի մոտ կեսը որդերը յուրացնում են, իսկ մնացած կեսը դուրս է զալիս իրեւ կղկղանք, ըստ որում առա-

Հին չորս հասակներում նրանք յուրացնում են $\frac{1}{2}$ -ը, իսկ միայն
հինգերորդ հասակում՝ կերածի համարյա $\frac{1}{2}$ -ը:

Փորձերը ցույց են տալիս, որ մեկ կիլոգրամ խոնավ բոժոժ
ստանալու համար ծախսվում է մոտավորապես $10-12$ կիլոգրամ
թթենու տերեւ:

ԹԹԵՆԻՆԵՐԻ ԽՆԱՄՔՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒԻՄԸ

Վերևում մենք ասացինք, որ թթենու տերեւն ամենից առաջ
հանդիսանում է իրեն՝ թթենու համար օրգանական սնուքնդ մա-
տակարարող օրգան: Օգտագործելով այդ տերեւը շերամի կերակըր-
ման համար՝ մենք թթենին զրկում ենք սննդից:

Շերամի որդերի գալնան կերակըրումները սկսվում են այն
ժամանակ, երբ թթենու ծոտի բողբոջներն արթնանում են և
նրանցից դուրս եկած են լինում արդեն $3-5$ հատ կազմակերպ-
ված տերեներ: Առա այդ մոմենտից սկսած մինչև կերակըրումների
վերջը ($35-40$ օր) թթենիները անընդհատ զրկվում են իրենց
սնող օրգաններից և նախորդ ու նույն տարվա երիտասարդ շիվե-
րից: Այդ հանգամանքն ինարկե, աղջում է ծառի կյանքի տե-
զողության վրա և կարճացնում այն:

Մեզ տրդեն հայտնի է, որ որդերը մեծ քանակությամբ
կերի կարիք զգում են հինգերորդ հասակում: Առաջին երկու հա-
սակներում նրանք շատ չնշին կեր են պահանջում, երբորդ ու
չորրորդ հասակներում կերի պահանջը զգալիորեն ավելանում է,
իսկ այդ չորս հասակներում միասին պահանջում են ամբողջ
կերի $\frac{1}{4}$ -ը:

Գիտենալով այդ, շերամի որդերը կերակըրելու ժամանակ
թթենիների տերեները պետք է օգտագործել ըստ կարիքի, աս-
տիճանաբար:

Երբ որդերը դեռ նոր են արթնանում կամ գտնվում են
առաջին հասակում, նրանց կերակըրելու համար զգուշությամբ
պետք է պոկել բնից, արմատավզից և սաղարթի հիմնական ճյու-
ղերի ցածի մասերից դուրս եկած շիվերի միայն տերեները:
Երբեք չի թույլատրվում նորածիլ տերենի հետ պոկել նաև ամ-
բողջ բողբոջը, մի բան, որ շատ հաճախ է տեղի ունենում ան-
զողուշ վարվելու հետևանքով: Բողբոջը հանդիսանում է ապագա
շիվը, այդ իսկ պատճառով պոկել ամբողջ բողբոջը, նշանակում

Է ոչնչացնել տպագա ճյուղն իր բազմաթիվ տերեներով և զրկեց ծառը տերեների բերքից:

Որդերի այդ հասակում չի թույլատրվում կտրել նաև շիվերը: Այդ շրջանում շիվերն ամբողջությամբ և լրիվ տերենակալած չեն լինում: Թողնելով այդ շիվերը՝ բարձրացնում ենք տերեկի մերքատվությունը, որովհետև մինչև որդերի հետագա հասակները նրանք տալիս են մեծ քանակությամբ տերեներ:

Որդերի մեծամալու հետ մեկաեղ փոխվում է նաև ծառերի օդապարծման ձևը: Նրանց երկրորդ և երրորդ հասակներում արդեն պետք է կտրատել բնից գուրս եկած շիվերն ու սաղարթի հիմնական ճյուղերի վրա դաւրս եկած մանր շիվերը, որոնք խանգարում են միմյանց: Դրանով միաժամանակ ծառը մաքրվում է: Բնից վրա պսակի հիմնական ճյուղերի ուրանքներում և արմատավզեց գուրս եկած ավելորդ շիվերից: Վերջինները պետք է կտրել ճիմքից:

Որդերի չորրորդ և հինգերորդ (վերջին) հասակներում պետք է կտրատել արդեն սաղարթի հիմնական ճյուղերի ծայրերից գուրս եկած միամյա շիվերը՝ թողնելով հիմքից հաշված 1—1,5 սմ բարձրությամբ բութակ: Որդերի չորրորդ հասակում պետք է կտրատել դագաթի մանր շիվերը, իսկ հինգերորդ հասակում՝ խոշորները: Սաղարթի այդ շիվերը կտրատելու ժամանակ չվնասել հիմնական ճյուղերը:

Թթենին այս ձևով օգտագործելու հետևանքով, որդերի կերակրումից հետո, նրա պսակը մերկանում է:

Որդերի կերակրման հոռւն շրջանում կարող է պատահել որ շիվերը լրիվ չկտրատեն, այլ թողնեն ճեղքված շիվերը և շիվերի ավելցուկ մասերը, բայց կերակրումները վերջացնելուց անմիջապիս հետո, պետք է կարգի բերել ծառը, որի համար անհրաժեշտ է կտրատել բոլոր ավելորդ շիվերի մնացորդները հիմքից, իսկ պսակի հիմնական ճյուղերի վրա թողնել միայն 1—1,5 սմ երկարությամբ բութակներ՝ հետագայում նոր շիվեր գուրս գալու համար: Այդպիսի մասերից գուրս են գալիս ավելի շատ շիվեր, հետեւաբար նաև շատ տերեւ որով և բերքատվությունը ավելի բարձր է լինում:

Թթենիներն օգտագործելուց հետո, նրանց պսակների վրա մինում են մեծ քանակությամբ կտրտվածքներ, որոնցից կարող

ևն դուրս հոսել ծառի մեջ գտնվող ջուրը՝ մեջը լուծված սննդաւ-
նյութերով։ Հաճախ մեծ քանակությամբ ջուր հոսելով թրջում
են պսակի հիմնական ձյուղերը, ինչպես նաև բունը (բնից դուրս-
եկած ձյուղերը կարատելու դեպքում)։ Խոնավացած կտրվածք-
ներում, ինչպես նաև այլ թաց մասերում բուն են դնում զանա-
զան վնասակար սնկեր և միջատներ ու առաջացնում վերքեր։
Դրանից խուսափելու համար, ծառն օգտագործելուց անմիջապես
հետո կտրված մասը պետք է մաքրել, այդքաղործական սուր դա-
նակով հարթեցնել ու մածիկ քսել՝ վերքերը ծածկելու համար։
Այդ աշխատանքը պետք է կատարել շուտ, որովհետև ծառերն
օգտագործելուց հետո, պետք է թթաստանն անպայման ջրել՝ և
հողը փորել եթե ջուրը արվի ծառերն օգտագործելուց անմի-
ջապես հետո, առանց կտրվածքները ծածկելու, ծառից գուրս-
եկող ջրի հոսանքը կուժեղանա և նա ավելի շատ կվնասի։ Այդ
իսկ պատճառով թթենիներն օգտագործելուց հետո թթաս-
տանը պետք է ջրել 10 օրվա ընթացքում։

Թթենիները, շերամի կերակրման համար օգտագործելուց-
հետո, կարիք են զգում արտակարգ ինամքի, որպեսզի նրանք-
կարողանան վերականգնել իրենց ուժերը և նորմալ աճեն ու
զարգանան։ Այդ խնամքն ապահովելու է հաջորդ տարվա տերևի-
քերքը, ուստի այդ ջուրը կարեորագույններից մեկն է։ Այնուհետեւ
ամառվա ամիսներին պետք է ջրել 4—5 անգամ և վերջին ջուրը
տալ սեպտեմբերի 15—20. ին։

Վաղ գարնանը, թթենիներն օգտագործելուց առաջ, հողը
պետք է փխրեցնել։ Պարսագիր կարգով պետք է հողը փորել
նաև թթենիները գարնան կերակրումների համար օգտագործելուց-
հետո, որպեսզի նրանք լավ սննունդ ստանան և նոր շիվերն ու-
ժեղ զարգանան ու աճեն և հետեւյալ տարին տերևի բարձր բերք-
տան։ Աշնանը միջջարքային տարածության հողը պետք է վա-
րել 20—25 ամ խորությամբ։

Մենք տեսանք, թե որքան խոշոր նշանակություն ունի ա-
զույը տերևի կերային արժեքի տեսակետից։ Ազուտական պարա-
տանյութն օժանդակում է տերևի մասսայի ու քանակի ավելա-
նալուն, խոշորացնում է տերևի թիթեղը, ուժեղացնում է ճյու-
ղերի աճեցողությունը։ Բացի գրանից, ազուտական պարարտա-
նյութը բարձրացնում է տերևի որակը, այն դառնում է սննդաւ-

բար և շոշափելիս փափուկ: Մննդաբար տերեները որդերն ուսում
են ախորժակով, և մեկ միավոր կերից ստացվում է ավելի շատ
բոժոքի բերք:

Թթենու վրա դրական աղեցություն են թողնում նաև փոս-
ֆորական և կալիումական պարարտանյութերը:

Թթաստանների հողը պարարտացնելու համար յուրաքան-
չյուր տարի մեկ հեկտարին պետք է տալ հետեւյալ քանակությամբ
պարարտանյութեր.

Ազոտական (սուլֆատամոնիում-20 տոկ.) . 600—900 կգ

Ֆոսֆորական (սուլֆերֆոսֆատ-18 տոկ.) . 500 կգ

Կալիումի աղ (60 տոկ.) 100 կգ

Պարարտանյութը հողը պետք է մտցնել թթենիների ա-
ճեցողությունը սկսելուց մոտավորապես մեկ ամիս տուած, միշ-
շարքերում, և անմիջապես հողը փորել ու ծածկել:

Բացի հանքային պարարտանյութերից, թթաստանը պետք
է պարարտացնել նաև օրգանական պարարտանյութերով, այն է՝
գոմաղբով, խառնաղբով և այլն: Նայած թե հողն ինչքանով է
հարուստ մննդանյութերով, ըստ այնմ էլ մեկ հեկտարին կարե-
լի է տալ 20—40 տոննա հասունացած զոմաղբ: Վերջինս պետք
է մտցնել աշնանը՝ աշնանավարի ժամանակ:

Պարարտանյութից դրական աղեցություն ստանալու հա-
մար անհրաժեշտ է թթաստանի հողը ժամանակին փխրեցնել, մո-
ւախորժերը քաղհանել և ջրել:




ՑԱՆԿ


Ներածություն	3
Հայկական ՍՍՌ-ում աճող թթենու տեսակները և տե-	
ղական դլամավոր սորտերը	5
Թթենու տերեկի կազմությունը	7
Թթենու տերեկի քիմիական բաղադրությունը	8
Թթենու տերեկի ֆիզիկական կազմությունը	11
Թթենու տերեկի կերային արժեքը	14
Երամի որդի կերակրումը	24
Թթենիների խնամքն ու օգտագործումը	25

Տեխնիկական Խմբագիր՝ Մ. ԿԱՓԿԱՆՅԱՆ
Երանցուհի՝ Ա. ԱՐԶՈՒՐԱՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 20/VIII 1947 թ., ստորագրված է տպաղեռ-
թյան 22/IX 1947 թ., Վ.թ 03249, պատվեր 657, հրատ. 454, տիրաժ 1000.
2 տպագրական մամուլ, 1 մամուլում 38400 տպ. նիշ.

Հայկական ՍՍՌ Դիտ. Ակադեմիայի տպարան, Երևան, Աբովյան 104.





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007855

Գիւլ, 2 թ.

A 19287

38